

17752

սկետաբներ բոլոր յերկրներն միացեք

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

Դ Ի Մ Ո Ւ Մ Ը

ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ,
ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ
ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻՆ, ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ,
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻՆ

«ԿՈՄՈՒՆԻՍՏԻ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

324

Է-99

25 JAN 2010
25 SEP 2006

324

4-99

mf

Պրոկտորները բոլոր յերկրներէ, միացեք

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈՂԵՎԷՐԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

Դ Ի Մ Ո Ւ Մ Ը

Բոլոր ընտրողներին, բանվորներին,
բանվորուհիներին, գյուղացիներին և
գեղջկուհիներին, Կարմիր Բանակին,
խորհրդային ինտելիգենցիային:

1938 թ.

Թ. Բելիսի

3069
38

ԸՆԿԵՐՆԵՐ!

1937 թվականի դեկտեմբերի 12-ին խորհրդային ժողովուրդն աշխարհում ամենագեմեղեցիկ և ամենախաղաղ Ստալինյան Սահմանադրության հիման վրա ընտրեց իր իշխանութիւն ղարձրագույն որդանը՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը:

Խորհրդային Միութիւն ընտրողների 97 տոկոսը մասնակցեց ընտրութիւններին, զբաղեցրելով իսկ ցայտուն կերպով ցուցադրելով խորհրդային ժողովրդի քաղաքական ակտիվութիւնը հակադէպ աճումը, մեր յերկրի աշխատավորների իրենց քաղաքացիական պարտքի խոր ըմբռնումը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետութիւնը առաջ:

Համ. Կ (բ) Կ հենարկով ընտրողներին ուղղած իր պատմական գեմեղեցիկ մեջ ընդգծում եր, վոր «Բոլշեւիկների կուսակցու-

թյունն ընտրություններում հանդես ե գալիս անկուսակցական բանվորների, գյուղացիների, ծառայողների, ինտելիգենցիայի հետ բլոկ, դաժնեմ կնքած», «վոր բոլշևիկների կուսակցությունը չի սահմանադաշտվում անկուսակցականներից, այլ ընդհակառակը գնում ե դեպի ընտրություններն անկուսակցականների հետ բլոկ, դաշինք կընքած, գնում ե բանվորների և ծառայողների արհեստակցական միությունների, կոմյուրիտմիության և անկուսակցականների մյուս կազմակերպությունների ու ընկերությունների հետ բլոկ կազմած»:

Խորհրդային ժողովրդի բարոյական և քաղաքական անխախտ միասնությունը, նրա անսահման վստահությունը դեպի Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը և նրա Ստալինյան Կենտրոնական Կոմիտեն գտավ իր արտահայտությունը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների արգյունքների մեջ:

Ավելի քան 90 միլիոն ընտրողներ ձայն տվին Կոմունիստներին և անկուսակցական

ների Ստալինյան բլոկի թեկնածուներին, քվեարկեցին Լենինի-ՍՏԱԼԻՆԻ կուսակցության քաղաքականության ոգտին, Խորհրդային իշխանության քաղաքականության ոգտին:

Ամբողջ խորհրդային ժողովուրդն անսահման նվիրվածության և սիրո զգացմունք արտահայտեց Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության և ամբողջ աշխարհի աշխատավորների առաջնորդ Մեծ ՍՏԱԼԻՆԻ հանդեպ:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների այդ փայլուն արդյունքներն անսպասելի չեյին մեր կուսակցության համար:

Իր ամբողջ փառապանծ պատմության ընթացքում Լենինի-ՍՏԱԼԻՆԻ կուսակցությունն ապացուցեց, վոր նա միակ կուսակցությունն ե, վորն իսկապես և հետևողականորեն պաշտպանում ե աշխատավորների շահերը շահագործողների և ճնշողների դեմ, միակ կուսակցությունն ե՝ ընդունակ համախմբելու իր շուրջն ամենալայն ժողովրդական մասսաներին, կազմակերպելու և տա-

նելու նրանց՝ պաշարելու շահագործողական իրավակարգը տապալելու և անդամակարգ կոմունիստական հասարակարգ կառուցելու համար:

Նորհրդային ժողովուրդը լավ գիտե, վնաս բուլժեիկների կուսակցութեանը, կուսակցութեան և ժողովրդի առաջնորդ Մեծ ՍՏԱԼԻՆԻ իմաստուն ղեկավարութեանն և պարտական սոցիալիզմի իր համաշխարհային պատմական հաղթանակներով, վորոնք մեր հայրենիքը «հետամնացութեան և միջնադարի, մթութեան և անկուտուրականութեան, աղքատութեան, աշխատավորների իրավագրկութեան և ճնշման յերկրից, վորպիսին եր հին Ռուսաստանը, դարձրին առաջավոր, կուտուրական, զորեղ սոցիալիստական պետութիւն»։ (Համ. Կ (բ) Կ Կենտկոմի ղեմումից՝ բոլոր ընտրողներին)։

Նորհուրդների յերկրի աշխատավորները լավ գիտեն, վոր իրենց յերջանիկ, խնդագին կյանքով, աշխատանքի, կրթութեան, հանգստի, ապահով ծերութեան անկապտե-

լի և յերաշխավորւած իրենց մեծ իրավունքներով պարտական են Մեծ ՍՏԱԼԻՆԻՆ։

Նորհրդային Միութեան ժողովուրդները լավ գիտեն, վոր ժողովուրդների ցարական բանտի կործանումով, անցյալի ազգային ճնշման և գաղութային ստրկացման վոչընչացումով, իրենց ազգային վերածնունդով և սոցիալիստական տնտեսութեան ու կուտուրայի ծաղկումով իրենք պարտական են բուլժեիկների կուսակցութեան Լենինյան Ստալինյան ազգային քաղաքականութեանը, ժողովուրդների ստալինյան բարեկամութեանը։

Ահա թե ինչու բուլժեիկների /կուսակցութեանը հույսը դրել եր ժողովրդի վստահութեան վրա ՆՍՏՄ Գերագույն Նորհրդի ընտրութիւններում, ահա թե ինչու նա «իրավունք ունի հուսալու, վոր ընտրողները միահամուռ կերպով ձայն կտան կոմունիստների և անկուսակցականների բոլի թեկնածուներին»։ (Համ. Կ (բ) Կ Կենտկոմի ղեմումից՝ բոլոր ընտրողներին)։

Լենինի-ՍՏԱԼԻՆԻ կուսակցութեան ղեկա-

վարությամբ, ոռւս մեծ ժողովրդի ոգնությամբ, վորը տաղալեց ցարական ինքնակալությունը և առաջինը բարձրացրեց հաղթական սոցիալիստական հեղափոխության դրոշը, ցարական Ռուսաստանի՝ անցյալում ճնշված ժողովուրդներն ազատություն ստացան և դուրս յեկան ազգային վերածննդի, տնտեսական և կուլտուրական ծաղկման լայն ուղին:

Ստալինյան Սահմանադրության մեծ սկզբունքների վրա կառուցված իրենց սահմանադրությունների հիման վրա մեծ խորհրդային Միության միութենական 11 հանրապետությունները պատրաստվում են իրենց Գերագույն խորհուրդներին ընտրություններին:

1938 թվականի հունիսի 12-ին խորհրդային Վրաստանի աշխատավորները կրկնապես պետական իշխանության բարձրագույն որգանը՝ Վրացական խՍՀ Գերագույն խորհուրդը:

Վրաստանի Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը, Համ. Կ (բ) Կ հավա-

տարիւմ, մարտական ջոկատը բարձր և պահում կոմունիստների և անկուսակցականների Ստալինյան բլոկի դրոշը, գնում և դեպի Գերագույն խորհրդի ընտրությունները սերտ գաշինք կնքած անկուսակցական բանվորների, գյուղացիների, ծառայողների, ինտելիգենցիայի հետ:

Մեծ վոգեկորությամբ են անցնում բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի բազմաթիվ ժողովները, վորոնք արդեն առաջադրում են Վրացական խՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածուներ: Վրաստանի աշխատավորներն իրենց կողմից առաջին թեկնածու առաջադրեցին խՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակը կազմակերպող և վոգեշնչող, յերջանիկ, խնդագին կյանք կերտող Մեծ ՍՏՍԱԼԻՆԻՆ:

Այն բացառիկ համերաշխությունը, վորով բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի ժողովներն առաջ են քաշում թեկնածուներ կոմունիստներից և անկուսակցականներից, ցույց է տալիս, թե վորքան խորը և հաստատապես արմատացավ ժողո-

վըրդի գիտակցության մեջ կոմունիստների
և անկուսակցականների Ստալինյան բռնի
գաղափարը, թե վորքան խորն են յուրաց-
րել աշխատավորները, վոր «յուրաքանչյուր
անկուսակցական պատգամավոր, կլինի նաև
կոմունիստների պատգամավորը, ինչպես վոր
յուրաքանչյուր կոմունիստական պատգա-
մավոր կլինի անկուսակցականների պատ-
գամավորը»։ (Համ. Կ (բ) Կ Կենտկոմի դի-
մումից՝ բոլոր ընտրողներին)։

Վրաստանի Կոմունիստական (բոլշևիկնե-
րի) կուսակցությունը հույս ունի, վոր աշ-
խատավորների թե կուսակցական և թե ան-
կուսակցական կազմակերպությունները և
ընկերություններն այսուհետև ել միահա-
մուռ կերպով առաջ են քաշելու ընդհանուր
թեկնածուներ կոմունիստներից և անկուսակ-
ցականներից, վոր Վրացական ԽՍՀ Գերա-
գույն Խորհրդի ընտրությունների ուրն ան-
կուսակցական ընտրողները նույնպես միա-
համուռ կերպով ձայն են տալու կոմունիստ
թեկնածուներին, ինչպես և անկուսակցա-
կան թեկնածուներին։

Վարձի և արդյոք Վրաստանի Կոմունիս-
տական (բոլշևիկներ) կուսակցությունը
հույս դնել վրացական ժողովրդի վստահու-
թյան վրա, նրա ոժանդակության վրա ա-
ռանջիկա ընտրություններում։

Վրաստանի Կոմունիստական (բոլշևիկնե-
րի) կուսակցության հիմքերը դեռ հեղափո-
խական շարժման արշալույսին դրել և Մեծ
Ղեկնի հավատարիմ աշակերտ և մերձավո-
րագույն գինակից՝ ընկեր ՍՍՍՀ-ին։

Վրաստանի բոլշևիկները ՍՍՍՀ-ի դեկա-
վարությամբ կազմակերպում եյին բանվոր-
ներին և գյուղացիներին՝ պայքարելու ցա-
րական ինքնակալության դեմ, վրացական
իշխանների, կալվածատերերի, կուլակների
և կապիտալիստների դեմ՝ ազատագրելու
Վրաստանի աշխատավորներին ազգային
ճնշումից և գաղութային ստրկացումից,
շահագործումից և աղքատացումից։

Վրաստանի բոլշևիկները ՍՍՍՀ-ի դեկա-
վարությամբ հեղափոխական շարժման բո-
լոր ետապներում անհաշտ պայքար եյին
մղում մենշևիկների, բուրժուական նացիո-

նալիստների և աշխատավորները մյուս վո-
խերիմ թշնամիների դեմ, արմատացնելով
ժողովրդական մասսաների մեջ ցարիզմի,
բուրժուական-կալվածատիրական իրավա-
կարգի հեղափոխական տապալման անհրա-
ժեշտության գիտակցությունը:

Վրաստանի բոլշևիկները լենինի յիմ
ՍՍՍԼԻՆԻ ղեկավարությամբ մենշևիկյան
տիրապետության շրջանում գլխավորեցին
բանվորների և դյուղացիների պայքարը,
մենշևիկյան լուծը թոթափելու, Վրաստա-
նում սոցիալիստական հեղափոխության
հաղթանակի համար:

Վրաստանում խորհրդային իշխանության
հաստատվելուց հետո Վրաստանի Կոմու-
նիստական (բոլշևիկները) կուսակցությու-
նը լենինի—ՍՍՍԼԻՆԻ գրոշի տակ պայքար
ծավալեց վրացական ժողովրդի բոլոր թըշ-
նամիներին ջախջախելու և վոչնչացնելու
համար, Վրաստանը ծաղկափթիթ սոցիալ-
լիստական հանրապետության վերածելու
համար:

Իսկ ինչ եր ներկայացնում Վրաստանն
անցյալում:

Նա ռուսական ցարիզմի հետամնաց կի-
սաաղքատ գաղութն էր, ուր ցարական չի-
նովնիկները վրացական իշխանների, կալ-
վածատերերի, կուլակների և կապիտալիստ-
ների հետ դաշն կնքած անխնա շահագոր-
ծում էյին ժողովրդին, կոպտաբար վտանա-
հարելով բանվորների և գյուղացիների ա-
մենատարրական իրավունքները. ծաղրելով
նրանց մարդկային արժանապատվությունը:

Իրենց տիրապետության տարիներին
վրացական մենշևիկները վերջնականապես
ավերեցին յերկրը, վերածելով այն գիշա-
տիչ շահագործման որջեկաթի՝ արեվմտա-յիմ-
բուպական իմպերիալիստների համար:

Վրաստանի աշխատավորները հեծում էյին
գաղութային ճնշման և բուրժուական—
կալվածատիրական շահագործման կրկնակի
լծի տակ:

Իսկ այժմ խորհրդային Վրաստանը հան-
դիսանում է ծաղկափթիթ մի հանրապետու-
թյուն զարգացած սոցիալիստական արդյու-

նաբերությամբ և առաջավոր գյուղատնտես-
սությամբ: Միմիայն առաջին և յերկրորդ
հնգամյակներին տարիներին Վրաստանի
ժողովրդական տնտեսության մեջ ներդրու-
թիւնը եւ ավելի քան յերեք միլիարդ ռուբլի:

Արդյունաբերության՝ անցյալում գոյու-
թյունն ունեցած ճյուղերի արմատական վե-
րակառուցման և ընդլայնման հետ միասին
(մանգան, ածուխ), ստեղծվել են արդյու-
նաբերության մի շարք բոլորովին նոր
ճյուղեր՝ մեքենաշինական (մասնավորապես՝
թեյի և գինեգործական սարքավորման),
ֆերրո-ձուլվածքային, ցեմենտի, նավթային,
տեքստիլ, պահածոյի, շաքարի, ալյումինի և
հաղվագյուտ մետաղների հանույթի (վոսկի,
մկնդեղ, մոլիբդեն) և վոչ հանքային պեղե-
լիքների (բարիտ, գումբրին և այլն):

Վրաստանի արդյունաբերական արտա-
դրանքի ծավալը խորհրդային իշխանության
տարիներին մեծացավ համարյա 20 ան-
գամով:

Հեղափոխությունից առաջ ելեքտրական
լուսավորությունը շքեղություն էր, վորը

մատչելի չէր միայն քաղաքային բուրժուա-
զիային: Իսկ այժմ Իլիչի ճրագը մտել և
Վրաստանի ամենահեռավոր շրջանները և
գյուղերը: Ներկայումս ելեքտրական ենե-
րգիայի արտադրությունը Վրաստանում գե-
րազանցեց նախապատերազմական մակար-
դակին 24 անգամ:

Առանձնապես նշանակալից են Վրաստա-
նի հաջողությունները գյուղատնտեսության
ընազանում:

Վրաստանի բուլղեմիկների կոմունիստա-
կան կուսակցությունը, անշեղորեն հետեւե-
լով Համ. Կ (բ) Կ կենտկոմի և անձամբ
ընկեր ՍՏՍԼԻՆԻ ցուցումներին, ճիշտ վո-
րոշեց գյուղատնտեսության զարգացման
գիծը Վրաստանի կլիմայական և հողային
պայմաններին համապատասխան:

Սորհդային իշխանության տարիներին
Վրաստանում լայն զարգացում ստացան
մերձարևադարձային և տեխնիկական թանգ-
արժեք կուլտուրաները՝ թեյ, ցիտրուսներ,
տունգ, խաղող, ծխախոտ, ելկալիպտ, ալյումին,
պղինի, յեթերատուներ և այլն, վորոնք

հանդիսանում են գյուղացիութեան նյութական բարեկեցութեան աճման հիմքը:

Հսկայական աշխատանքներ են տարւում Կոլխիզան չորացնելու ուղղութեամբ: Վոչ հեռավոր ապագայում Կոլխիզայի հարթութեանը, վորն անցյալում մալարիայի ոջախ էր, կվերածվի ծաղկափթիթ մերձարեադարձային այգու:

Վերջնականապես ամրապնդվեց կոլտնտեսային կարգը: Գյուղացիական բոլոր տնտեսութեանների ավելի քան 77 տոկոսը միավորված են սոցիալիստական տնտեսութեանների՝ կոլտնտեսութեանների մեջ, վորոնք հանդիսանում են ունեւոր և կուլտուրական կյանքի հաստատուն բազան:

Ավելի քան յերկու և կես միլիոն հեկտար հող, վորն անցյալում պատկանում էր իշխաններին, կալվածատերերին, կուլակներին և հողերականութեանը, ավճար ոգտագործման և հանձնվել գյուղացիութեանը:

Սոցիալիստական իրավակարգի հաղթանակը և ամրացումը Վրաստանում արմա-

տապես բարեկամեցին աշխատավորների գրութեանը:

Գործադրութեանը՝ աշխատավորների այդ սոսկալի չարիքը բուրժուական իրավակարգի պայմաններում՝ անցյալում յեղել և վրացական գյուղացիութեան զգալի մասի բաժինը: Իրագործելով իր գաղութացման քաղաքականութեանը, ցարիզմն արմատական բնակիչներին քշում էր դարերով սովոր տեղերից, բնակեցնելով նրանց հողերը կոլտնտեսներով: Դաժան շահագործումն իշխանների, ազնվականների, կալվածատերերի և կուլակների կողմից, գյուղացիներին հարկադրում էր թողնել իրենց վորորմելի տնտեսութեանները յեվ յերկար ժամանակով գնալ քաղաքները: Մինչդեռ քիչ թե շատ նշանակալի արդյունաբերութեան բացակայութեան հետեանքով, վորի զարգացումն արհեստականորեն կասեցվում էր, վրացական գյուղացիութեան խոշոր քանակութեանը իր աշխատանքի կիրառում չէր գտնում Վրաստանի քաղաքներում և հարկադրված

600

եր աշխատանք վորոնել իր հայրենիքի սահմաններից հեռու:

Այժմ գործազրկությունից հետք իսկ չի մնացել: Սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության բոլորն բարգաւաճումն ապահովեց աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակի վերելքը:

Անշեղորեն աճում և բանվորների և ծառայողների ունակ աշխատավարձը: Տարեցտարի բարձրանում և աշխուրի արժեքը կուտնտեսություններում: Վրաստանի տասնյակ կոլտնտեսություններ դարձան միլիոնատերեր: Կոլտնտեսականների լայն մասսաներն արդեն դարձել են ունեվորներ և շարունակում են այսուհետև ել ամրապնդել իրենց նյութական բարեկեցությունը:

Այժմ բանվորներից, գյուղացիներից, ինտելիգենցիայից վոչ մեկը չի կարող ունենալ վաղվա որվա նկատմամբ անվստահության ստվեր իսկ:

Մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացու առաջ բացված են իր աշխատանքը, իր

նտեղծագործական ուժերը պետական, տրեստական և կուլտուրական շինարարության ամեն մի ասպարիզում գործադրելու լայն հնարավորություններ:

Այժմ ունեւոր և ուրախ են ապրում խորհրդային Վրաստանի ժողովուրդները:

Վրաստանի կուրորտային բացառիկ հարստություններն անցյալում յենթարկվում էին գիշատիչ շահագործման ի շահ մասնավոր սեփականատերերի, կամ բնավ չէին ռզտագործվում:

Այժմ Վրաստանն արժանի կերպով վայելում և համամիութենական առողջարանի հուշակ, Վրաստանի բազմաթիվ ամենագեղեցիկ կուրորտները, հանգստյան բարեկարգ տներով և սանառորիաներով, հանդիսանում են Վրաստանի և վոչ խորհրդային Միության աշխատավորների բուժման և հանգստի սիրված վայրերը:

Վրաստանի աշխատավորության նյութական բարեկեցության աճման հետ են կապված խոշոր հաջողությունները կուլտուրայի բնագավառում:

Միայն Սորհրդային իշխանության որոշ վրացական կուլտուրան ստացավ արագ վերածնության և հետագա զարգացման հնարավորություն:

Ներկայումս Վրաստանը — համատարած զբաղիտության և առաջավոր կուլտուրայի յերկիր է: Ամբողջ հանրապետության մեջ անց է կացված ընդհանուր տարրական պարտադիր ուսում տարրական դպրոցի սահմաններում, իսկ քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում՝ վոչ լրիվ միջնակարգ դպրոցի սահմաններում:

Վրաստանի բազմաթիվ տարրական և միջնակարգ դպրոցներում սովորում են բանվորներ, գյուղացիներ, ինտելիգենցիայի մոտ 700.000 յերեխաներ:

Սորհրդային իշխանության որոշ բացված՝ Վրաստանի 20 բարձրագույն ուսումնական հաստատությունները թողարկել են 15.000-ից ավելի ինժեներներ, բժիշկներ, ագրոնոմներ, մանկավարժներ, ճարտարապետներ, գիտական աշխատողներ:

Բարգավաճեցին վրացական արվեստն ու

գրականությունը: Կուսակցությունը և Սորհրդային իշխանությունը, մշտական ուշադրություն և հոգատարություն ցույց տալով գրողներին, նկարիչներին, կոմպոզիտորներին, ռեժիսորներին, ղեկաւաններին, արվեստի բոլոր աշխատողներին, ապահովեցին նրանց զաղափարական և ստեղծագործական անշեղ աճումը:

Կոռուցված են մեծ քանակությամբ թատրոններ, կինո, ալեմբներ, խրճիթ-ընթերցարաններ և ուրիշ կուլտուր-լուսավորական հաստատություններ:

Մինչև Սորհրդային իշխանությունը Վրաստանում, ինչպես և վողջ ցարական Ռուսաստանում կինը ստրուկ էր, ինչպես և մինչև այժմ նա ստրուկ է բոլոր կապիտալիստական յերկրներում:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունն ազատագրեց կնոջը, նրան դարձրեց հասարակության լիիրավ անդամ: Ստալինյան Սահմանադրությունն ընդմիջատմրապնդեց Սորհրդային կնոջ մեծ իրավունքները:

Քիչ քանակությամբ կանայք չեն առաջ
քաշված Վրաստանում պատասխանատու,
պետական, տնտեսական և կուլտուրական
աշխատանքի: Վրացական կինը գնում է
ձեռք-ձեռքի աղամարդու հետ տնտեսական,
քաղաքական և կուլտուրական կյանքի բո-
լոր բնագավառներում:

Վրաստանի բուլշևիկներն անշեղորեն իրա-
գործում են Ստալինյան հոգատարությունը
մայր-կնոջ նկատմամբ, յերեխաների առող-
ջության նկատմամբ, ապահով և յերջանիկ
մայրության համար ստեղծում են բոլոր
պայմանները:

Վրացական ժողովուրդը, վսրն իր բազ-
մադարյան վողջ պատմության ընթացքում
քաջարի կերպով պաշտպանել է իր ազա-
տությունը, միայն խորհրդային իշխանու-
թյան պայմաններում դարձավ իրոք ազատ,
ԽՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքի իրա-
վահավասար անդամը:

«Բարեկամությունը ԽՍՀՄ ժողովուրդնե-
րի միջև — մեծ ու լուրջ նվաճում է: Վո-
րովհասե քանի դեռ այդ բարեկամությունը

գոյություն ունի, մեր յերկրի ժողովուրդ-
ներն ազատ ու անպարտելի կլինեն: Վոչ
վոք մեզ սարսափելի չե, վոչ ներքին, վոչ
արտաքին թշնամիները, քանի այդ բարե-
կամությունն ապրում է յեվ գոյություն
ունի»: (ՄՏԱԼԻՆ):

Բուլշևիկների կուսակցության ղեկավա-
րությամբ Անդրկովկասի ժողովուրդները —
ադրբեջանյան, հայկական, վրացական —
անշեղորեն իրագործելով Լենինյան-Ստա-
լինյան ազգային քաղաքականության սկզբ-
բունքները, վերացրին ազգային թշնաման-
քը, վորն անցյալում հրահրում եյին ցարեղ-
մը, մենշևիկները, մուսավաթիստները յեվ
դաշնակները: Մասսաներին դաստիարակե-
լով Լենինյան-Ստալինյան ինտերնացիոնա-
լիզմի սկզբունքներով, Վրաստանի յեվ Ան-
դրկովկասի բուլշևիկները ստեղծեցին և
ամրապնդեցին ազգային խաղաղություն,
վորը «տեսնված չեր բուրժուազիայի որոնք
և անհնարին եր բուրժուական իրավակար-
գում»: (ԼԵՆԻՆ):

Միայն ^{այս} սոցիալիստական իրավակարգը,

միայն կոմունիստական (բոլշևիկներին) կուսակցութիւնը հավասարապէս ապահովում են ինչպէս մեծ, նույնպէս յեւ ժողովուրդների իսկական աղատութիւնը և անկախութիւնը:

Ստալինյան ազգային քաղաքականութեան իրագործման հիման վրա հակայական հաջողութիւնների հասան Արեւելիայի, Աշտուրիայի ինքնավար հանրապետութիւնները յեւ Հարավ-Ոսկիայի ինքնավար մարզը, վորոնք մտնում են Վրացական ԽՍՀ կազմի մեջ:

Վրացական ազատ ժողովուրդը մինչև վերջ նվիրված է ԽՍՀՄ ժողովուրդներին Ստալինյան բարեկամութեանը: Խորհրդային Վրաստանը հանդիսանում է Խորհրդային Միութեան անբաժանելի մասը: Վրաստանի աշխատավորները, վորոնք սերտորեն համախմբված են Մեծ ՍՍՍՀ-ի շուրջը, համակված խորհրդային հայրենասիրութեան վրդով, պատրաստ են խորտակել հարված հասցնել ամեն մի սանձարձակ թշնամու,

վորը կհամարձակվի հարձակվել մեր մեծ հայրենիքի սրբազան սահմանների վրա:

Վրացական ժողովրդի հակայական հաջողութիւնները Վրաստանի կոմունիստական (բոլշևիկներին) կուսակցութեան կողմից Լենինյան-Ստալինյան քաղաքականութեան անշեղ իրագործման արդիւնք են հանդիսանում:

Վրաստանի բոլշևիկները, վորոնք դաստիարակված են սոցիալիզմի բոլոր թշնամիների հանդեպ անհաշտութեան Լենինյան-Ստալինյան տրդիցիաներով, ապահովել են մենշևիկների, նացիոնալ-դեմոկրատների, ֆեդերալիստների և մյուս հակախորհրդային կուսակցութիւնների, լրտեսների, դիվերսանտների յեւ զնաարարների տրդիցիոտական-բուխարինյան բանդայի — ֆաշիզմի արյունոտ գործակալների մնացորդների ջախջախումն ու վոչնչացումը, վորոնք մտածում էին իւրի վրացական ժողովրդից սոցիալիզմի մեծ նվաճումները, նորից նրա վրէն դնել բուրժուական-կալվածատիրական շահագործման լուծը, Վրաստան

նը վերածեւ Արեւմտյան-Յեւրոպական խմբա-
րիալիզմի գաղութի:

Վրաստանի Կոմունիստական (բուլշեւիկ-
ների) կուսակցությունը, վորին ղեկավա-
րում է Համ. Կ. (բ) Կ. Ստալինյան Կենտրո-
նական Կոմիտեն և Մեծ ՍՏԱՆԻՆԸ, իր վողջ
պատմության ընթացքում ապացուցեց, վոր
նա անձնուրացաբար պայքարում է Լենին-
նի—ՍՏԱՆԻՆԻ մեծ իդեաների իրագործ-
ման համար, վոր նա ընդունակ է հետեւի-
դականորեն և մինչև վերջ պաշտպանել ժո-
ղովրդի գործը:

Ահա թե ինչու Վրաստանի Կոմունիստա-
կան (բուլշեւիկների) կուսակցությունն ի-
րավունք ունի հույս ունենալ վրացական
ժողովրդի վստահության վրա՝ Վրացական
ԽՍՀ Գերագույն Խորհրդի առաջիկա ընա-
րություններում, բոլոր ընտրողների միահա-
մուռ քվեարկության վրա՝ հոգուտ կոմու-

նիսաների յեւ ճանկուսակցականների Ստա-
լինյան բլոկի թեկնածուներին:

Վրաստանի Կոմունիստական (բուլշեւիկ-
ների) կուսակցության Կենտրոնական Կո-
միտեն բոլոր ընտրողներին կոչ է անում ե՛ւ
աղելի լայն կերպով ծավալել Վրացական
ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություննե-
րի նախապատրաստությունը: Չպետք է լի-
նի վոչ մի քաղաքացի, վորն իր քաղաքա-
ցիական պարտքը չհամարեր ոժանդակել ա-
ռանց բացառության բոլոր ընտրողների
մասնակցությանը՝ Վրացական ԽՍՀ Գերա-
գույն Խորհրդի ընտրություններին:

Ով ձգտում է այն բանին, վորպեսզի
Խորհրդային Վրաստանը գնա առաջ ղեկի
սոցիալիստական անտեսության յեւ կուլ-
տուրայի հետագա բարգավաճումը, վորպես-
զի նա Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետությունների միասնական ընտանի-
քում հետագայում ևս զարգանա ղեկի Կո-

մունիղմ տանող ուղիով, ով ձգտում է այն բանին, վորպեսզի Վրաստանի ժողովուրդները ԽՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքում գնան զեպի իրենց նյութական յեվ կուլտուրական մակարդակի նոր վերելքը, նա կքվեարկի կոմունիստների յեվ անկուսակցականների Ստալինյան բլոկի թեկնածուների ոգտին:

Վրաստանի կոմունիստական (բոլշեվիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն բոլոր կոմունիստներին և համակրողներին կոչ է անում քվեարկել հոգու առնկուսակցական թեկնածուների նույնպես միահամուռ կերպով, ինչպես նրանք պետք է քվեարկեն կոմունիստ թեկնածուների ոգտին:

Վրաստանի կոմունիստական (բոլշեվիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն բոլոր անկուսակցական ընտրողներին կոչ է անում քվեարկել կոմունիստ

թեկնածուների ոգտին, նույնպես միահամուռ կերպով, ինչպես նրանք կքվեարկեն անկուսակցական թեկնածուների ոգտին:

Վրաստանի կոմունիստական (բոլշեվիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն կոչ է անում ընտրողներին, բոլորը վորպես մեկ մարդ, 1938 թվականի հունիսի 12-ին գալ քվեատուփերի մոտ՝ ընտրելու Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի յեվ Աջարական ու Աբխազական ԽՍՀ Գերագույն Խորհուրդները պատգամավորներ:

Կեցցե Խորհրդային Սոցիալիսական Հանրապետությունների Մեծ Միությունը—սոցիալիսական հեղափոխության հզոր հենարանն ամբողջ աշխարհում:

Կեցցե Խորհրդային Սոցիալիզմի Մեծ Միությունը Սահմանադրությունը:

Կեցցե Խորհրդային Վրաստանը:

Կեցցե կոմունիստների յեվ անկուսակցականների Մեծ Միության բոլոր Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի առաջիկա բնորոշություններում:

Կեցցե Համաժողովրդական Կոմունիստական (բոլշեվիկների) կուսակցությունը:

Կեցցե ՄԵԾ ՄՏ Ա. Լ. Ի. Ն. Ը,

Վրաստանի Կոմունիստական (բոլշեվիկների) կուսակցության Կենտրոնական Կոմիտե

05

Պատասխանատու խմբագիր՝ ՍԵՆ. ՎԱՐՊԱՆՅԱՆ
Սրբագրեց և թողարկեց՝ Ս. ԴՈՎՋԱՐՅԱՆ



Թիֆլիս 40.000 Պեգ. № 463 թիվ. 1-15176

Երևան «Գեղարվեստ» պատկ. թ. № 68

ՀՀ Ազգային գրադարան



NL0200726

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

414

ОБРАЩЕНИЕ

Центрального Комитета
Коммунистической Партии
(большевиков) Грузии

Ко всем избирателям,
рабочим, работницам,
крестьянам и крестьянкам,
к Красной Армии,
к советской интеллигенции.

(На армянском языке)

Издательство „Комунисти“